ԼԻԱՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ
Կրտսեր գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Lian_nazaryan@mail.ru

ԴԱՎԻԹ ԿՈՒՐԱՊԱՂԱՏԻ ՏՈՀՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ *Դավիթ Կուրապաղատ, Ատրներսեհ I, Տայք, տոհմածառ, Դավիթ Մեծի ծագումը, Վրաց Բագրատունիներ, Սմբատ պատմիչ:*

X դ. երկրորդ կեսին Տայքի կուրապաղատության պատմության մեջ բացվեց նոր էջ, որը կապված էր Դավիթ Կուրապաղատի անվան հետ: Նրա օրոք Տայքի կուրապաղատությունը դարձավ հզոր իշխանություն, որի կշիռն ու ազդեցությունը մեծ էր թե՛ Հայաստանում և թե՛ հարևան երկրներում: Պատմագիտության մեջ նա հայտնի է «մեծ», «թագավոր» տիտղոսներով[1]: Ասողիկը Դավիթ Կուրապաղատի մասին գրում է. «զի էր այրն [Դավիթ – Լ.Ն.] հեզ և հանդարտ, առաւել քան զամենայն թագաւորս, որ ի ժամանակս յայս» և ավելացնում. «Եւ եղև նա պատճառ խաղաղութեան և շինութեան ամենայն արևելեայց, մանաւանդ Հայոց եւ Վրաց»[2]: Իսկ Արիստակես Լաստիվերտցին նրան բնութագրում է իբրև «այր հզօր և աշխարհաշէն, մեծապարգև և աղքատասէր, որ էր արդարև սահման խաղաղութեան»[3]: «Վրաց Տարեգիրք»-ը Դավթի մասին նշում է, որ նա հոգատար էր աղքատների հանդեպ, խաղաղասեր էր,

---

[1] Տե՛ս **Ադոնց Ն.,** Դավիթ Կյուրոպաղատ, «ՊԲՀ», 2002, թիվ 3 (այսուհետ՝ **Ադոնց Ն.,** Դավիթ Կյուրոպաղատ), էջ 14, հմմտ. **Միքայէլ վարդապէտ Չամչեանց,** Պատմութիւն Հայոց, ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Բ, Վենէտիկ, 1785, էջ 837, **Avalichvili Z.,** La succession du Curopalate David d'Iberie, dynaste de Tao, ,,Byzantion", 1933, 8, էջ 177, **თოფურია პ.,** აღმოსავლეთ ამიერკავკასიის პოლიტიკური ერთეულები XI–XII საუკუნეებში, თბილისი, 1975, էջ 186, **Лордкипанидзе М.** Из истории грузино-византийских взаимоотношений на грани X–XI вв., საქართველოს ფეოდალური ხანის ისტორიის საკითხები, II, თბილისი, 1972, էջ 33:

[2] **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան** Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885 (այսուհետ՝ **Ասողիկ**), էջ 275:

[3] Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Ե., 1963 (այսուհետ՝ **Արիստակես Լաստիվերտցի**), էջ 22:

համեստ, բարի ու մարդասեր, եկեղեցիներ կառուցող, նրա հիմնած եկեղեցիներից էր Խախուի նշանավոր եկեղեցին[4]:

Դավիթ Կուրապաղատի մասին հայկական ու վրացական աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ, որոնք վերաբերում են ինչպես նրա կառավարման ժամանակաշրջանին, ներքին ու արտաքին քաղաքականությանը, իշխանության «կտակմանը» Բյուզանդիային և մահվան հանգամանքներին, այնպես էլ նրա ծագմանը:

Հայկական աղբյուրները սահմանափակվում են Դավթին «կիւրապաղատն Հայոց Դաւիթ»[5] կամ «Վրաց իշխան» և «Վրաց կուրապաղատ»[6] կոչելով: Իսկ վրացական աղբյուրները հիմնականում հիշատակում են նրան իբրև Տայքի կուրապաղատ Դավիթ[7]: Վերջինիս նախնիների ճյուղագրությունը պահպանվել է վրացական աղբյուրներում, սակայն դրանցում առկա են հատկապես Դավթի հոր՝ Ատրներսեհի հետ կապված հակասություններ: Վերջինիս ծագումը հստակ չէ, և նրան նույնացնում են այդ անունը կրող այլ տոհմակցի հետ: Հ. Պզտիկյանը նույնիսկ փոքր-ինչ չափազանցրած նշում է, որ Դավիթ Կուրապաղատի անձի, ծագման ու ազգության ուսումնասիրությունը «քաղաքականէն աւելի մշակութային է. անով միայն կրնանք Տայքի հրաշալի յուշարձաններուն հայկականութիւնը փրկել վրացական ձեռնմխութիւններէն»[8]: Ուստի անհրաժեշտ է պարզել Դավիթ Կուրապաղատի տոհմական ծագումը:

Բագրատունիների վրացական ճյուղը ծագել է VIII դ. վերջերին հայ Բագրատունիներից: Նրանք թեև ընդունեցին քաղկեդոնական դավանանքը, այնուամենայնիվ պահպանվում է նաև հայերենը և հայկական ծագումը: Դրա

---

[4] Տե՛ս **Картлис Цховреба** (История Грузии), главный редактор Р. Метревели, Тб., 2008 (այսուհետ՝ **Картлис Цховреба,** 2008), էջ 147:

[5] **Ասողիկ,** էջ 266:

[6] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, Բ. տպագրութիւն, Վաղարշապատ, 1898 (այսուհետ՝ Մատթէոս Ուռհայեցի), էջ 56, **Արիստակես Լաստիվերտցի,** էջ 33:

[7] Տե՛ս **Картлис Цховреба,** 2008, էջ 146–149, სუმბატ დავითის ძის ქრონიკა ტაო–კლარჯეთის ბაგრატიონთა შესახებ, გამოცემა მესამე, ტექსტი გამოსცა ვრცელი შესავლით, შენიშვნებით და ორი გენეალოგიური ტაბულით საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის ნამდვილმა წევრმა ე. თაყაიშვილმა, თბილისი, 1949 (այսուհետ՝ სუმბატ დავითის ძის ქრონიკა), էջ 67–68, **Вахушти Багратиони** История царства грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем Н.Т. Накашидзе, Тб., 1976 (այսուհետ՝ **Вахушти Багратиони**), էջ 189:

[8] **Պզտիկեան Յ.,** Տայք Բարձր Հայք, վրացական, թէ՞ հայկական, Ե., 2005, էջ 76:

վկայությունն է հենց Դավիթ Կյուրապաղատի պատվերով արաբերենից հայերեն թարգմանված «Զրուցները»[9]:

Բագրատունիների վրացական ճյուղի առաջին թագավոր Ատրներսեհ Ի-ը (899–923), որը բյուզանդական աղբյուրներում նաև կոչվում է կուրապաղատ[10], ուներ չորս որդի՝ Դավիթը, Աշոտը, Բագրատը և Սմբատը[11]: Որդիներից Դավիթը մահացավ 937 թ.՝ անժառանգ: Ապա 945 թ. մահացավ Բագրատ մագիստրոսը, որն ուներ մեկ որդի՝ Ատրներսեհը (մահացած՝ 961 թ.) և սա, ըստ Սմբատ պատմիչի, հոր մահից հետո դարձել էր մագիստրոս, իսկ հորեղբայրներից հետո՝ կուրապաղատ[12]: Եղբայրներից Աշոտը մահացավ 954 թ.՝ անժառանգ, իսկ կուրապաղատի տիտղոսն անցավ մյուս եղբորը՝ Սմբատին, որն էլ մահացավ 958 թ.՝ ունենալով երկու որդի՝ Բագրատ Ռեգվինին, որին դարձրեցին վրաց թագավոր՝ Բագրատ II (958–994) և մյուսը՝ Ատրներսեհ կուրապաղատն էր (մահացած՝ 983 թ.)[13]: Այսինքն՝ չորս եղբայրներից երկուսը՝ Դավիթն ու Աշոտը, մահացան անժառանգ, իսկ մյուս երկուսն էլ՝ Բագրատն ու Սմբատը, ունեցան Ատրներսեհ անունով որդիներ: Այս երկուսն էլ, ըստ XI դ. վրաց հեղինակ Դավթի որդի Սմբատի, կրում էին կուրապաղատի տիտղոսներ, իսկ Սմբատի մյուս որդին Բագրատ Ռեգվինին էր:

Համաձայն Սմբատ պատմիչի՝ 961 թ. մահացած Ատրներսեհը՝ Բագրատ մագիստրոսի որդին, ուներ երկու որդի՝ Բագրատ էրիսթավների էրիսթավը և Դավիթ էրիսթավների էրիսթավը[14]: Ըստ նույն աղբյուրի՝ վերջիններս իրենց հորը ստիպել են դառնալ հոգևորական և մտնել վանք: Նրանցից Բագրատը

---

[9] **Ակինենա Ն.,** Զրույց Պղնձէ Քաղաքի, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1958, թիվ 1–4, էջ 30–48:

[10] **Կոստանդին Ծիրանածին,** Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Ե., 1970 (այսուհետ՝ **Կոստանդին Ծիրանածին**), էջ 15–17, 151, **Թեոփանեսի Շարունակող,** Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 15, Բյուզանդական աղբյուրներ, Ե, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի, Ե., 1990, էջ 237:

[11] Տե՛ս სუმბატ დავითის ძის ქრონიკა, էջ 66, **Сумбат Давитис-дзе** История и повествование о Багратионах, перевод, введение и примечания М.Д. Лордкипанидзе [Памятники грузинской исторической литературы, III, Тб., 1979 (այսուհետ՝ **Сумбат Давитис-дзе**), էջ 34–35, **Вахушти Багратиони,** էջ 189]:

[12] Տե՛ս სუმბატ დავითის ძის ქრონიკა, էջ 66, **Сумбат Давитис-дзе,** էջ 35–36:

[13] Տե՛ս სუმბატ დავითის ძის ქრონიკა, էջ 67, **Сумбат Давитис-дзе,** էջ 36:

[14] Տե՛ս նույն տեղում:

մահացել է 966 թ., իսկ «Դավիթը դարձել է մեծ», որի մահվան թվականը պատմիչը չի հայտնում[15]:

Սմբատ պատմիչի նշած մյուս Ատրներսեհը՝ մահացած 983 թ., Սմբատի որդին և Բագրատ Ռեգվինիի եղբայրը, ուներ մեկ որդի՝ Դավիթը, որը երիտասարդ էր[16]: Սրա մահվան թվականը նույնպես նշված չէ: Այսինքն՝ ըստ Դավթի որդի Սմբատ պատմիչի, Ատրներսեհ I թագավորի երկու որդիներն էլ ունեին Ատրներսեհ կուրապաղատ անունով որդիներ, իսկ սրանք երկուսն էլ ունեին Դավիթ անունով ժառանգներ, որոնց մահվան թվականները հայտնի չեն: Սակայն պատմիչը քիչ անց նաև նշում է, որ «մահացավ Դավիթ մեծ կուրապաղատը, Ատրներսեհ կուրապաղատի որդին, քրոնիկոնի 221 թ. (1001 թ.), և նա չուներ որդի»[17]: Խոսքը վերաբերում է Տայքի տիրակալ Դավիթ Մեծ Կուրապաղատին, սակայն չի հասկացվում, թե նրա հայր Ատրներսեհ կուրապաղատը ո՞րն է՝ 961 թ., թե՝ 983 թ. մահացածը: Մինչ այս հարցի պարզաբանումը, անդրադառնանք նաև Ատրներսեհ I թագավորի սերնդի մասին վրաց մեկ այլ հեղինակ Վախուշտի (XVII դ.) տեղեկություններին, քանի որ դրանցում ևս պահպանվել է նրանց ճյուղագրությունը, որը մասամբ տարբերվում է Սմբատի վկայություններից:

Վախուշտը ևս վկայում է, որ Ատրներսեհ I թագավորը, որի մահվան թվականը չի նշում, ուներ չորս որդի՝ Դավիթը (մահացած՝ 937 թ.), Աշոտը (մահացած՝ 954 թ.), որոնք անժառանգ էին: Նրա երրորդ որդին էր Բագրատը, որին ըստ պատմիչի, բյուզանդական կայսր Ռոմանոս I Լեկապենոսը (919–944), շնորհել էր մագիստրոսի և կուրապաղատի տիտղոսներ[18]: Վախուշտն ապա նշում է, որ «այս Բագրատին *որդիները* ստիպեցին դառնալ հոգևորական և նա մահացավ 945 թ.»[19] [ընդգծումը մերն է – Լ.Ն.]: Սակայն հաջորդ նախադասությամբ պատմիչը նշում է, որ Բագրատն ուներ միայն Ատրներսեհ անունով որդի, որին կայսրը շնորհել էր մագիստրոսի կոչում, և սա մահացել էր 971 թ. (պետք է լինի՝ 961 թ., քանի որ նշված է քրոնիկոնի 181 թ., որը համապատասխանում է 961 թ.)՝ թողնելով երկու որդիներ՝ Բագրատին և Դավիթին՝ էրիսթավների էրիսթավ[20]: Ըստ Վախուշտի, այս Բագրատը

[15] Նույն տեղում:
[16] Տե՛ս նույն տեղում:
[17] სუმბატ დავითის ძის ქრონიკა, გვ. 68, **Сумбат Давитис-дзе,** с. 37.
[18] Տե՛ս **Вахушти Багратиони,** էջ 189:
[19] Նույն տեղում:
[20] Տե՛ս նույն տեղում:

մահացել էր 979 թ. (պետք է լինի՝ 969 թ., քրոնիկոնի 189 թ.), իսկ եղբայրը՝ Դավիթը՝ 976 թ. (պետք է լինի՝ 966 թ., քրոնիկոնի 186 թ.), որոնք ժառանգներ չունեին[21]: Վախուշտի նշած Բագրատը, որին որդիները ստիպել են դառնալ հոգևորական, իրականում ուներ միայն Ատրներսեհ անունով մեկ որդի, իսկ հոգևորական դառնալու վկայությունը շփոթված է Սմբատ պատմիչի նշած այդ նույն Բագրատի որդի Ատրներսեհի՝ իր որդիներ Բագրատի ու Դավիթի կողմից ստիպողաբար հոգևորական դառնալու հետ:

Համաձայն Վախուշտի՝ Ատրներսեհ I թագավորի չորրորդ որդին՝ Սմբատը, որի մահվան թվականն էլ չի նշվում, մահացել էր՝ թողնելով երկու որդի՝ Բագրատ Ռեգվինիին և Ատրներսեհին: Վերջինս, ըստ Վախուշտի, մահացել էր 983 թ., և ուներ Դավիթ անունով մեկ որդի, որը «տիրեց Տայքին, Բասենին, Թորթումին, Սոմխիթին, Կղարջքի հողերին, և Շավշեթում և Ջավախքում տիրեց ամրոցների»[22]: Ըստ պատմիչի, այս Դավիթը մահացել է 1001 թ., և չունենալով որդի՝ որդեգրել է Բագրատ Ռեգվինիի թոռ Բագրատին[23]: Այսինքն՝ Վախուշտի նշած այս Դավիթը նույն ինքը՝ Տայքի Կուրապաղատ Դավիթ Մեծն էր, որը փաստորեն, համաձայն հեղինակի, Ատրներսեհ I-ի որդիներից Սմբատի սերնդից էր՝ նրա թոռը:

Սակայն, արքայազն Վախուշտի սույն վկայությունները, համեմատելով Սմբատ պատմիչի տեղեկությունների հետ, կարելի է նկատել որոշ անհամապատասխանություններ: Թեև Սմբատ պատմիչը, ինչպես վերը նշվեց, վկայում է երկու Ատրներսեհի որդիներ Դավիթներից միայն մեկի մահվան թվականը՝ 1001-ը, սակայն հստակ չէ, թե խոսքը նրանցից որի մասին է: Այնուամենայնիվ, պատմիչի տեղեկությունների քննությունից կարելի է պարզել Դավիթ Մեծ Կուրապաղատի ծագումը, և փաստել, որ Վախուշտը շփոթել է նրան ու հորը:

Յ. Մարկվարտը, հիմնվելով Վախուշտի տեղեկությունների վրա, Տայքի Դավիթ Կուրապաղատի հայր է համարում 983 թ. մահացած Ատրներսեհին[24]: Ն. Ադոնցն իրավացիորեն նշում է, որ «հարկ կա դրանում կասկածել»[25]: Ինչպես վերը նշվեց, ըստ Սմբատ պատմիչի, 983 թ. վախճանված Ատրներսեհի մահվան պահին նրա որդի Դավիթը երիտասարդ էր: Տայքի Դավիթ Կուրապաղատը 976–979 թթ. բյուզանդական զորավար Վարդ Սկլերոսի ապստամ-

[21] Տե՛ս նույն տեղում:

[22] Նույն տեղում:

[23] Տե՛ս նույն տեղում, էջ 189–190:

[24] Տե՛ս **Մարկուարտ Յ.,** Վրական Բագրատունեաց ծագումը, գերմաներէնէ թարգմանեց Հ.Մ. Հապոզեան, Վիեննա, 1915, տոհմածառը, էջ 148:

[25] **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 14:

բության ժամանակ կայսերական արքունիքում բավականին ազդեցիկ դիրք ու համբավ ուներ: Ուստի դժվար թե 983 թ. երիտասարդ Դավիթը նման ազդեցիկ անձ լիներ 970-ական թթ.: Բացի այդ, եթե նա իսկապես հոր մահվան պահին երիտասարդ էր, ապա 990-ական թ. կեսերին չէր կարող լինել «այր ծեր... և անցեալ զաւուրբք»[26] և 1000/1001 թ. վախճանվել «լցեալ աւուրբք, ծերացեալ ժամանակօք»[27]: Ն. Ադոնցը նաև նկատել է, որ Սմբատ պատմիչը 961 թ. մահացած Ատրներսեհի որդուն է կոչում «Մեծ»[28], որից էլ կարելի է ենթադրել, որ Տայքի Կուրապաղատ Դավիթ Մեծը հենց այս Ատրներսեհի որդին էր: Վերջինիս և իր որդիների մասին հիշատակված է Օշկ վանքի վրացերեն մի արձանագրությունում, որտեղ նշված են Ատրներսեհ կուրապաղատը, Բագրատ էրիսթավների էրիսթավը և Դավիթ մագիստրոսը[29]: Փաստորեն, դրանից կարելի է ենթադրել, որ Դավիթը նախ եղել է մագիստրոս, ապա հոր մահից հետո՝ 961 թ. ժառանգել է կուրապաղատի տիտղոսը[30], իսկ նրա եղբայր Բագրատը մահացել է 966 թ.՝ լինելով էրիսթավների էրիսթավ:

Այսպիսով, դատելով աղբյուրների տեղեկություններից, կարելի հստակ նշել, որ Տայքի կուրապաղատ Դավիթ Մեծը Ատրներսեհ I-ի չորս որդիներից Բագրատի՝ 961 թ. մահացած որդի Ատրներսեհի որդին էր:



Տոհմածառի հեղինա՝
Լ. Նազարյան

[26] Ասողիկ, էջ 270:
[27] Նույն տեղում, էջ 275:
[28] Տե՛ս **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 14:
[29] Տե՛ս **Սարգիսեան Ն.,** Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 90:
[30] Տե՛ս **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 14–15, հմմտ. **Միքայէլ Չամչեանց,** նշվ. աշխ., էջ 837:

THE GENEALOGY OF DAVID KUROPALATES

NAZARYAN L.

Summary

Key words: *David Kurapalates, Atrnerseh I, Taik, genealogy, the origin of David the Great, The Georgian Bagratides, historian Smbat.*

In the middle of the 10th century David the Great became the Kuropalates of the Palace. The Georgian sources ascribe different origins to him. According to some sources, he ascended from the dynasty of Bagrat, being one of the four sons of the first King of the Georgian branch of the Atrnerseh of Bagratides. David's father was an Atrneseh Kuropalates who died in 961. After his father's death, David was awarded the title of the Kuropalates of the Palace, becoming the last Kuropalates in Tayk (Tao).

РОДОСЛОВНАЯ ДАВИДА КУРОПАЛАТА

НАЗАРЯН Л.

Резюме

Ключевые слова: *Давид Куропалат, Атрнерсех I, Тайк, генеалогия, происхождение Давида Великого, грузинские Багратиды, историк Смбат.*

В середине X в. куропалатом Тайка стал Давид Великий. В грузинских источниках ему приписывается разное происхождение. Согласно источникам, он был из рода Баграта, одного из четырех сыновей первого царя грузинской ветви Багратидов Атрнерсеха. Отцом Давида был Атрнерсех куропалат, который умер в 961 г. После смерти отца Давид получил титул куропалата, став последним куропалатом Тайка.